

«ԼԻՄԻՏԻՆ ԱՍԵԹ ՄԵՆԵՉՄԵՆԹ» ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններ

*2025 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Անկախ աուդիտորական եզրակացության հետ միասին*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Անկախ աուդիտորական եզրակացություն

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն..... 1
 Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 2
 Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն 3
 Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն..... 4

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Հաշվետու ընկերություն 5
 2. Պատրաստման հիմունքներ 5
 3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն 6
 4. Եկամուտ կառավարման վճարներից 13
 5. Չուտ եկամուտ առևտրային գործունեությունից 14
 6. Չուտ տոկոսային եկամուտ/(ծախս)..... 14
 7. Գործառնական ծախսեր..... 14
 8. Շահութահարկի գծով ծախս..... 15
 9. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ..... 15
 10. Կառավարման վճարների գծով դեբիտորական պարտք 15
 11. Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ 16
 12. Հիմնական միջոցներ 16
 13. Տրամադրված փոխառություններ 16
 14. Ստացված վարկեր 17
 15. Այլ պարտավորություններ 17
 16. Բաժնետիրական կապիտալ..... 17
 17. Ռիսկերի կառավարում..... 18
 18. Ֆինանսական գործիքների իրական արժեքը..... 22
 19. Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության վերլուծություն 23
 20. Պայմանական պարտավորություններ 23
 21. Գործարքներ կապակցված կողմերի հետ..... 24



Ernst & Young CJSC
2, Vazgen Sargsyan St.
Kamar Business Center
Yerevan, 0010, Armenia
Tel.: +374 60 50 7777
ey.com/am

«Էրնսթ րնդ Յանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0010
Վազգեն Սարգսյան փող., 2 շենք
«Կամար» Բիզնես Կենտրոն
Հեռ.՝ +374 60 50 7777

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Լիմիթեդ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ի տնօրենների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Լիմիթեդ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համար շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, զուտ ակտիվներում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ Էական տեղեկատվությունը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր Էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն ՖՀՄՍ Հաշվապահական հաշվառման ստանդարտների:

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է այս եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀԷՄՍԽ) կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի Էթիկայի միջազգային կանոնագրքի (ներառյալ՝ Անկախության Միջազգային Ստանդարտները) (ՀԷՄՍԽ կանոնագիրք), որը կիրառելի է հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում կիրառելի Էթիկայի այն պահանջների, որոնք վերաբերում են հանրային հետաքրքրություն ներկայացնող կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտին: Մենք պահպանել ենք նաև Էթիկայի այլ պահանջները՝ համաձայն այս պահանջների և ՀԷՄՍԽ կանոնագրքի: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և Տնօրենների խորհրդի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՅՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքը կիրառելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերության, ընդհատել դրա գործունեությունը, կամ երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Տնօրենների խորհուրդը պատասխանատու է Ընկերության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկողության համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ վերցրած, զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ Աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այս ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- ▶ Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:

- ▶ Ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- ▶ Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամոռությունը:
- ▶ Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդ բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա իրադարձություններն ու հանգամանքները կարող են հանգեցնել Ընկերության գործունեության անընդհատության դադարեցմանը:
- ▶ Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Տնօրենների խորհրդին, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«Էրնսթ և Ինգ Յանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան

Գլխավոր տնօրեն
Աուդիտի բաժնի գործընկեր



Էրիկ Չայրապետյան

Պատասխանատու աուդիտոր
2026թ. ապրիլի 29

Աննա Չայան

**ՃԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

հազար դրամ	Ծան.	2025թ.	2024թ.
Եկամուտ կառավարման վճարներից	4	708,782	267,534
Չուտ եկամուտ առևտրային գործունեությունից	5	70,839	28,409
Չուտ տոկոսային եկամուտ/(ծախս)	6	(1,086)	423
Չուտ եկամուտ		778,535	296,366
Գործառնական եկամուտ		604	911
Գործառնական ծախսեր	7	(158,386)	(86,681)
Չուտ արժեզրկումից կորուստներ		(955)	-
Շահույթ նախքան շահութահարկով հարկումը		619,798	210,596
Շահութահարկի գծով ծախս	8	(98,723)	(33,267)
Շահույթ հաշվետու ժամանակաշրջանի համար		521,075	177,329
Ընդամենը համապարփակ եկամուտ		521,075	177,329



Վերոնիկա Սարգսյան

Գործադիր տնօրեն



Արմեն Ազիզյան

ՍտեփԱփ ՍՊԸ ներկայացուցիչ

2026թ. ապրիլի 29

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱԾՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

<i>հազար դրամ</i>	Ծան.	2025թ. դեկտեմբերի 31	2024թ. դեկտեմբերի 31
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	9	5,824	2,801
Կառավարման վճարների գծով դեբիտորական պարտք	10	279,551	28,701
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	11	448,886	260,812
Հիմնական միջոցներ	12	5,219	6,347
Փոխառություններ տրամադրված	13	191,355	4,200
Հետաձգված հարկային ակտիվներ	8	823	605
Այլ ակտիվներ		507	495
Ընդամենը ակտիվներ		932,165	303,961
Պարտավորություններ			
Ընթացիկ պարտավորություններ շահութահարկի գծով		90,296	29,357
Վարկեր ստացված	14	39,806	–
Այլ պարտավորություններ	15	10,412	4,028
Ընդամենը պարտավորություններ		140,514	33,385
Սեփական կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ	16	76,200	76,200
Գլխավոր պահուստ	16	5,063	5,063
Չբաշխված շահույթ		710,388	189,313
Ընդամենը սեփական կապիտալ		791,651	270,576
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		932,165	303,961

ՄԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Սեփական կապիտալի տարրերի անվանումը	Բաժնետիրական կապիտալ	Գլխավոր պահուստ	Զբաղիված շահույթ	Ընդամենը
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	72,000	–	101,257	173,257
Տարվա շահույթ	–	–	177,329	177,329
Ընդամենը համապարփակ եկամուտ	–	–	177,329	177,329
Ներդրումներ բաժնետիրական կապիտալում	4,200	–	–	4,200
Շահաբաժիններ	–	–	(84,210)	(84,210)
Մասհանումներ գլխավոր պահուստին	–	5,063	(5,063)	–
Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ	4,200	5,063	(89,273)	(80,010)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	76,200	5,063	189,313	270,576
2025թ. հունվարի 1-ի դրությամբ	76,200	5,063	189,313	270,576
Տարվա շահույթ	–	–	521,075	521,075
Ընդամենը համապարփակ եկամուտ	–	–	521,075	521,075
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	76,200	5,063	710,388	791,651

ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

<i>հազար դրամ</i>	Ծան.	2025թ.	2024թ.
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից			
Ստացված կառավարման վճարներ		456,321	362,848
Տոկոսային մուտքեր		-	113
Վճարված տոկոս		(941)	-
Գործառնական ծախսեր և եկամուտ		(82,815)	(38,972)
Չուտ իրացված վնաս արտարժույթով առևտրային գործունեությունից		(1,099)	(184)
Դրամական միջոցների զուտ արտահոսք արժեթղթերից և ֆոնդի փայերից		(115,146)	(84,778)
Վճարված աշխատավարձ և այլ համարժեք վճարումներ		(66,454)	(42,681)
Դրամական միջոցների հոսքեր՝ գործառնական գործունեությունից նախքան շահութահարկը		189,866	196,346
Վճարված շահութահարկ		(38,001)	(24,328)
Չուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից		151,865	172,018
Դրամական միջոցների հոսքեր՝ օգտագործված ներդրումային գործունեությունում			
Տրամադրված փոխառությունների աճ	13	(192,131)	(113,260)
Տրամադրված փոխառությունների մարում		4,200	-
Հիմնական միջոցների ձեռքբերում	12	(1,013)	(3,849)
Չուտ դրամական միջոցների հոսքեր՝ օգտագործված ներդրումային գործունեությունում		(188,944)	(117,109)
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից			
Ստացված վարկերի աճ	14	40,253	-
Վճարված շահաբաժիններ	16	-	(68,210)
Ներդրումներ կանոնադրական կապիտալում	16	-	4,200
Չուտ դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից		40,253	(64,010)
Չուտ փոխարժեքային տարբերության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		(139)	(121)
Արժեզրկման պահուստի փոփոխությունների ազդեցությունը		(12)	-
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ հոսքեր		3,174	(9,101)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հաշվետու ժամանակաշրջանի սկզբի դրությամբ		2,801	12,023
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ		5,824	2,801

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

1. ՀԱՇՎԵՏՈՒ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ա) Հիմնական գործունեություն

«Լիմիթես ասեթ մենեջմենթ» ՓԲԸ-ն հիմնադրվել է 2022 թվականին: 2022թ. դեկտեմբերի 27-ին Ընկերությունը գրանցվել է ՀՀ Կենտրոնական բանկում (ՀՀ ԿԲ) որպես ներդրումային ֆոնդի կառավարիչ և ստացել է ներդրումային ֆոնդի կառավարման 0007 լիցենզիան: Ընկերության կառավարման մարմիններն են բաժնետերերի ընդհանուր ժողովը և տնօրենների խորհուրդը: Ընկերության ընթացիկ գործունեությունը կառավարվում է Ընկերության գործադիր տնօրենի կողմից: Գործադիր տնօրենի պաշտոնը զբաղեցնում է Վերոնիկա Սարգսյանը: Ընկերության ղեկավարության հատուցման գումարը սահմանվում է համապատասխան կառավարման մարմնի որոշմամբ: Ընկերության տարեկան ֆինանսական և տնտեսական գործունեությունները ենթակա են արտաքին աուդիտի:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը կառավարում է հետևյալ հրապարակային ներդրումային ֆոնդը (“Ֆոնդ”)

- Լիմիթես Փրայմ Ֆոնդ

Ընկերության գրանցման հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Բեռու փողոց 1/3, հարկ 5:

բ) Հայաստանի գործարար միջավայրը

Ընկերությունն իր հիմնական գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, այն ենթակա է Հայաստանի տնտեսական և ֆինանսական շուկաների ազդեցությանը, որոնք հանդիսանում են զարգացող շուկաներ: Իրավական, հարկային ու օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն ենթակա են տարբեր մեկնաբանությունների և հաճախակի փոփոխությունների, որոնք այլ իրավական և հարկաբյուջետային խոչընդոտների հետ միասին նպաստում են Հայաստանում գործող կազմակերպությունների առջև ծառայած մարտահրավերներին: Բացի այդ, 2020թ. սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղում զինված հակամարտության բռնկումը, դրան հաջորդած Լեռնային Ղարաբաղի վիճելի տարածքների շուրջ հրադադարի պայմանավորվածությունը և, հետագայում, Հայաստանի Հանրապետության տարածքում հակամարտության սրումը ավելի են մեծացրել բիզնես միջավայրի անորոշությունը:

Ուկրաինայի պատերազմի արդյունքում շատ առաջատար երկրներ և տնտեսական միություններ իրիստ տնտեսական պատժամիջոցներ են սահմանել Ռուսաստանի և Բելառուսի նկատմամբ՝ ներառյալ ռուսական բանկերի, այլ իրավաբանական և ֆիզիկական անձանց նկատմամբ: Պատերազմի սկզբից ի վեր նկատվել է ռուսական ռուբլու՝ արտարժույթի նկատմամբ զգալի անկայունություն, ինչպես նաև՝ Ռուսաստանի արժեթղթերի շուկայում և այլ շուկաներում ցուցակված ռուսական ընկերությունների արժեքի զգալի անկում: Պատերազմի հետևանքով եղավ ոչ ռեզիդենտների ներհոսք և մի շարք ընկերությունների տեղափոխում (հատկապես Ռուսաստանից) Հայաստան՝ ինչը դրական նշանակալի դերակատարություն ունեցավ, ընդհանուր առմամբ, Հայաստանի տնտեսության խթանման և մասնավորապես, ներդրումների և ակտիվների կառավարման գործընթացների խթանման հարցում: Քանի որ պատերազմը դեռ շարունակվում է, հնարավոր չէ արժանահավատորեն գնահատել այն ազդեցությունը, որը կարող է ունենալ Ընկերության գործունեության վրա, քանի որ անորոշություն կա ընդհանուր տնտեսության վրա ազդեցության աստիճանի վերաբերյալ:

Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության վերաբերյալ ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

Ղեկավարությունը սահմանել է քաղաքականություններ և ընթացակարգեր տվյալ կարգավորումներին համապատասխանելու նպատակով:

Ընկերության միակ բաժնետերն է Արտյոմ Չաբարյանը (100%):

2. ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

2.1 Համապատասխանության մասին հայտարարություն

Ընկերության ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ՖՀՄՍ Հաշվապահական հաշվառման ստանդարտների համաձայն՝ թողարկված Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհուրդի (ՀՀՄՄԽ) կողմից: Հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով այն գնահատման վրա, որ Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է անընդհատության սկզբունքից ելնելով:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

2. ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ (շարունակություն)

2.2 Չափման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք հաշվառվում են իրական արժեքով: Չափման այլ հիմունքների կիրառման դեպքում Ընկերությունը բացահայտում է դրանք համապատասխան ծանոթագրություններում:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է («ՀՀ դրամ»), որը հանդիսանում է Ընկերության գործառնական արժույթը և այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Այս ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հազար ՀՀ դրամով, և բոլոր արժեքները կլորացված են հազար դրամի չափով, եթե այլ բան նշված չէ:

3. ՀԱՇՎԱԳԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ա) Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը՝

	2025թ. դեկտեմբերի 31	2024թ. դեկտեմբերի 31
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	381.36	396.56

բ) Ֆինանսական գործիքների ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները դասակարգվում են սկզբնական ճանաչման ժամանակ որպես հետագայում ամորտիզացված արժեքով, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով և շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Ընկերության՝ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվները ներառում են դրամական միջոցներ և դրանց համարժեքներ:

Բոլոր ճանաչված ֆինանսական ակտիվները այնուհետև չափվում են կամ ամորտիզացված արժեքով, կամ իրական արժեքով՝ կախված ֆինանսական ակտիվների դասակարգումից:

Ֆինանսական ակտիվը պահվում է վաճառքի համար, եթե՝

- այն ձեռք է բերվել հիմնականում տեսանելի ապագայում վաճառքի նպատակով, կամ
- սկզբնական ճանաչման պահին այն կազմում է Ընկերության կողմից համատեղ կառավարվող որոշակի ֆինանսական գործիքների պորտֆելի մաս և ունի կարճաժամկետ կտրվածքով շահույթի ստացման իրատեսական հնարավորություն, կամ
- այն հանդիսանում է ածանցյալ գործիք (բացառությամբ այն ածանցյալ գործիքի, որը հանդիսանում է ֆինանսական երաշխավորության պայմանագիր կամ նախորոշված է և օգտագործվում է որպես հեջավորման գործիք):

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

3. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (շարունակություն)

բ) Ֆինանսական գործիքների ճանաչում և ապաճանաչում (շարունակություն)

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Այն ֆինանսական ակտիվները, որոնք չեն չափվում ամորտիզացված արժեքով կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով, չափվում են շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով: Մասնավորապես՝

- ▶ Բաժնային գործիքներում ներդրումները դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե միայն Ընկերությունը չի դասակարգում բաժնային գործիքներում ներդրումները, որը չի պահվում վաճառքի կամ ձեռնարկատիրական գործունեության միավորման արդյունքում առաջացած պայմանական վարձատրության համար, որպես՝ սկզբնական ճանաչման ժամանակ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող:

Պարտքային գործիքները, որոնք չեն համապատասխանում ամորտիզացված արժեքի չափանիշին կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափման չափանիշին, դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող: Ինչպես նաև, պարտքային գործիքները, որոնք համապատասխանում են կամ ամորտիզացված արժեքով չափման համար նախատեսված չափանիշներին, կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափման համար նախատեսված չափանիշներին, կարող են դասակարգվել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող սկզբնական ճանաչման ժամանակ, եթե այսպիսի դասակարգումը վերացնում կամ զգալիորեն նվազեցնում է չափման կամ ճանաչման անհամապատասխանությունը («հաշվապահական հաշվառման անհամապատասխանություն»), ինչը կառաջանար ակտիվների կամ պարտավորությունների չափումից կամ տարբեր հիմունքներով այդ ակտիվների կամ պարտավորությունների մասով օգուտի կամ վնասի ճանաչումից:

Բաժնային արժեթղթերը, կորպորատիվ պարտքային արժեթղթերը, ԱՄՆ դոլարով արտահայտված պետական պարտատոմսերը և ֆոնդի փայերում ներդրումները դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվները չափվում են իրական արժեքով յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում՝ ներառյալ ողջ օգուտը կամ վնասը, որը ճանաչվում է շահույթում կամ վնասում այն դեպքում, երբ նրանք չեն հանդիսանում հեջային գործիքների մաս: Շահույթում կամ վնասում ճանաչված զուտ օգուտը կամ վնասը ներառում է ֆինանսական ակտիվի մասով ցանկացած շահաբաժին կամ ստացված տոկոս և ներառվում է «զուտ եկամուտ առևտրային գործունեությունից» հոդվածում:

Արտարժույթի փոխարկումից օգուտ և վնաս

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը որոշվում է այդ արտարժույթով և փոխարկվում են սփոթ փոխարժեքով յուրաքանչյուր հաշվետու ժամականաշրջանի վերջի դրությամբ: Մասնավորապես՝

- Հեջային գործիքների մաս չհանդիսացող, ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների մասով արտարժույթային տարբերությունները ճանաչվում են շահույթի կամ վնասում «Չուտ եկամուտ առևտրային գործունեությունից» հոդվածում;
- Հեջային գործիքների մաս չհանդիսացող, շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների մասով արտարժույթային տարբերությունները ճանաչվում են շահույթի կամ վնասում «Չուտ եկամուտ առևտրային գործունեությունից» հոդվածում:

գ) Արժեթղթերով գործարքներ և համապատասխան ներդրումային եկամուտ

Արժեթղթերը, որոնք իրենցից ներկայացնում են ընկերության կառավարման ներքո գտնվող ֆոնդերի փայեր, հաշվառվում են մեկ փային բաժին ընկնող զուտ ակտիվների հրապարակված կամ ներկայացված արժեքով:

Փոնդերում պահվող փայերից ստացված օգուտը կամ վնասը արտացոլում է զուտ ակտիվների արժեքի փոփոխությունները մեկ պահվող փայի հաշվով:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

3. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (շարունակություն)

դ) Հիմնական միջոցներ

Սկզբնական արժեքով հաշվառվող հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքով, հանած կուտակված մաշվածությունը և կուտակված արժեքկումից կորուստները: Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեքկումից կորուստները:

Մաշվածությունը, ընդհանուր առմամբ, ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների միավորի յուրաքանչյուր մասի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այս մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների օգտագործման մոդելը: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները, մնացորդային արժեքը և մաշվածության մեթոդը վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում՝ հաշվի առնելով գնահատման ցանկացած փոփոխության ազդեցությունը հեռանկարային հիմունքով:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:

Ստորև ներկայացվում են հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների նշանակալի տարրերի օգտակար ծառայության գնահատված ժամկետները:

Մաշվածության հաշվարկը կատարվում է գծային մեթոդի հիման վրա՝ կիրառելով հետևյալ տարեկան դրույքաչափերը՝

Համակարգիչներ	3 տարի
Տնտեսական գույք, գրասենյակային սարքավորումներ	8 տարի
Այլ ակտիվներ	8 տարի

ե) Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով դրամական միջոցներ և դրանց համարժեքներ են հանդիսանում բանկերում ընթացիկ հաշիվները:

զ) Սեփական կապիտալ

Ընկերության կողմից թողարկված բաժնային գործիքները հաշվառվում են անվանական արժեքով: Ընկերության շահաբաժիններ հայտարարելու և վճարելու կարողությունը կառավարվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգավորումներով: Շահաբաժինները ճանաչվում են որպես չբաշխված շահույթի բաշխում այն ժամանակահատվածում, երբ դրանք հայտարարվել են:

է) Կառավարման վճարների գծով դեբիտորական պարտք

Ակտիվի կառավարման գործունեություն և միջվորդավճարների գծով եկամուտ

Ակտիվների կառավարման և վարչարարության վճարները (կառավարման վճարներ) վերաբերում են հավատարմագրային գործունեության վճարներին, որոնց դեպքում Ընկերությունը պահում կամ իր հաճախորդների անունից ներդնում է ակտիվներ և մատուցում է ակտիվների վրա հիմնված այլ ֆինանսական ծառայություններ: Այդ վճարները հիմնված են այդ ֆոնդերում ներդրված հաճախորդի ակտիվների օրական մնացորդների վրա: Ֆոնդում ներառված՝ հաճախորդի ակտիվների իրական արժեքները հիմնված են շուկայում գնանշված արժեքների և այլ դիտարկելի շուկայական տվյալների վրա:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

3. ՀԱՇՎԱԳԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (շարունակություն)

է) Կառավարման վճարների գծով դեբիտորական պարտք (շարունակություն)

Կառավարման վճարները բաղկացած են երեք մասից՝

- (ա) Հաստատուն վճար՝ Ֆոնդի գուտ ակտիվների արժեքի տարեկան 2 (երկու) տոկոսի չափով: Հաստատուն վճարի հաշվարկի հիմք է հանդիսացել Ֆոնդի գուտ ակտիվների արժեքի միջին եռմսյակային արժեքը;
- (բ) Հավելավճար՝ 5 տոկոս կիսամյակային եկամուտը գերազանցող գումարի 40 (քառասուն) տոկոսի չափով (ներառյալ բոլոր ծախսերը): Հավելավճարը հաշվարկվում է հետևյալ սկզբունքով՝ բոլոր արժույթներով ակտիվները փոխարկվում են ԱՄՆ դոլարի՝ ըստ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքի հավելավճարի հաշվարկի օրվա դրությամբ, և հավելավճարը հաշվարկվում է ԱՄՆ դոլարով արտահայտված եկամտաբերության գծով: Հավելավճարի հաշվարկի հիմք է հանդիսանում նախորդ կիսամյակի վերջին օրվա դրությամբ եկամտաբերությունը: Ավելին, հավելավճարը գանձվում է այն դեպքում, երբ տվյալ կիսամյակի վերջում փայի գինը գերազանցում է այն կիսամյակի ավարտի նախորդ օրվա դրությամբ փայի գինը, որի ընթացքում գանձվել է հավելավճարը (բացառությամբ առաջին անգամ վճարվող հավելավճարի, որը հաշվարկվում է անվանական արժեքի գծով);
- (գ) Հաջողության հաստատուն վճարը որոշվում է Ֆոնդի փայատիրոջ կողմից ընտրված մարման օրը՝ հիմնվելով նախորդ օրվա դրությամբ հաշվարկված մեկ փայի հավելավճարի վրա: Այնուհետև այս վճարը համամասնորեն բաշխվում է բոլոր մարված փայերի միջև:

Կառավարման վճարներից հասույթը ճանաչվում է ժամանակի ընթացքում՝ ծառայությունների մատուցման ժամանակ:

ը) Ծահութահարկ

Ընթացիկ հարկը տարվա հարկվող շահույթի կամ վնասի գծով վճարման կամ ստացման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ և ներառում է նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

Հետաձգված հարկերը ճանաչվում են ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկման բազաների միջև: Հետաձգված հարկային պարտավորությունները ընդհանուր առմամբ ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկային ակտիվները ընդհանուր առմամբ ճանաչվում են բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով միայն այն չափով որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունները: Նմանատիպ հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեն ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առաջանում են գուղվիլից կամ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչման պահին (բացառությամբ բիզնես միավորումների) այնպիսի գործարքների արդյունքում, որոնք ազդեցություն չունեն ինչպես հաշվապահական, այնպես էլ հարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են համատեղ ձեռնարկություններում, դուստր և ասոցացված կազմակերպություններում ներդրումների հետ կապված հարկվող ժամանակավոր տարբերությունների դեպքում, բացառությամբ այն դեպքերի, որտեղ ժամանակավոր տարբերությունների հակադարձման ժամանակահատվածը կարող է վերահսկվել Կազմակերպության կողմից, և հավանական է, որ ժամանակավոր տարբերությունները չեն հակադարձվի տեսանելի ապագայում: Հետաձգված հարկային ակտիվները, որոնք առաջանում են այսպիսի ներդրումների կամ բաժնեմասնակցությունների գծով նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով, ճանաչվում են միայն այնքանով, որքանով հավանական է, որ կլինի հարկվող շահույթ, որի դիմաց այդ նվազեցվող ժամանակավոր տարբերությունները հնարավոր կլինի օգտագործել և կհակադարձվեն տեսանելի ապագայում: Հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքը պետք է վերանայվի յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվի այն չափով, որով այլևս հավանական չէ, որ կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

3. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (շարունակություն)

թ) Նոր և փոփոխված ստանդարտներ և մեկնաբանություններ

Ընկերությունն առաջին անգամ կիրառել է որոշ ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք ուժի մեջ են մտնում 2025թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար (եթե այլ բան նշված չէ): Ընկերությունը վաղաժամ չի ընդունել այլ ստանդարտ, մեկնաբանություն կամ փոփոխություն, որոնք հրապարակվել, սակայն դեռևս ուժի մեջ չեն մտել:

Փոխանակելիության բացակայություն - ՀՀՄՍ 21 ստանդարտի փոփոխություններ

2025թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար Փոխանակելիության բացակայություն - ՀՀՄՍ 21 Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքներ ստանդարտի փոփոխությունները հստակեցնում են, թե ինչպես պետք է կազմակերպությունը գնահատի՝ արդյոք արտարժույթը փոխանակելի է, և ինչպես պետք է որոշի սփոթ փոխարժեքը փոխանակելիության բացակայության դեպքում: Փոփոխությունները նաև պահանջում են տեղեկատվության բացահայտում, որը թույլ կտա ֆինանսական հաշվետվությունների օգտագործողներին հասկանալ, թե ինչպես է մեկ այլ արժույթով փոխանակման ոչ ենթակա արժույթը ազդում կամ ակնկալվում է, որ կազմի կազմակերպության ֆինանսական արդյունքների, ֆինանսական վիճակի և դրամական հոսքերի վրա:

Այս փոփոխությունը նշանակալի ազդեցություն չի ունեցել Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

ժ) Հրապարակված, սակայն դեռևս չգործող ստանդարտներ

Նոր և փոփոխված ստանդարտներն ու մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են, բայց դեռևս ուժի մեջ չեն մտել, մինչև Ընկերության կողմից ֆինանսական հաշվետվությունների թողարկումը, ներկայացվում են ստորև: Ընկերությունը մտադիր է ընդունել այս նոր և փոփոխված ստանդարտները և մեկնաբանությունները, կիրառելիության դեպքում, երբ ուժի մեջ մտնեն:

ՖՀՄՍ 18 Ֆինանսական հաշվետվություններում ներկայացում և բացահայտում

2024 թվականի ապրիլին ՀՀՄՍԽ-ն հրապարակել է ՖՀՄՍ 18 ստանդարտը, որը փոխարինում է ՀՀՄՍ 1 Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում ստանդարտին: ՖՀՄՍ 18-ը նոր պահանջներ է ներկայացնում շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում ներկայացման գծով՝ ներառյալ որոշ հանրագումարներ և միջանկյալ հանրագումարներ: Ավելին, կազմակերպությունները պարտավոր են շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում բոլոր եկամուտներն ու ծախսերը դասակարգել ըստ հինգ կատեգորիաների՝ գործառնական, ներդրումային, ֆինանսավորման, շահութահարկ, ընդհատված գործառնություններ, որոնցից առաջին երեք կատեգորիաները նոր են:

Ստանդարտը պահանջում է նաև նոր, ղեկավարության կողմից սահմանված կատարողականի չափորոշիչների, եկամուտների և ծախսերի միջանկյալ հանրագումարների բացահայտում և ներառում է նաև ֆինանսական տեղեկատվության համախմբման և տարանջատման նոր պահանջներ՝ հիմնված հիմնական ֆինանսական հաշվետվությունների և ծանոթագրությունների սահմանած «դերերի» վրա:

Բացի այդ, ՀՀՄՍ 7 Դրամական հոսքերի մասին հաշվետվություն ստանդարտում կատարվել են նեղ շրջանակի փոփոխություններ, որոնք ներառում են գործառնություններից դրամական հոսքերի՝ անուղղակի մեթոդով որոշելու մեկնարկային կետի փոփոխություն՝ «շահույթ կամ վնաս»-ից դեպի «գործառնական շահույթ կամ վնաս» և շահաբաժիններից ու տոկոսագումարներից դրամական հոսքերի դասակարգման ընտրության հնարավորության վերացում: Ավելին, որոշակի համապատասխան փոփոխություններ են կատարվել մի քանի այլ ստանդարտներում:

ՖՀՄՍ 18 և այլ ստանդարտների փոփոխությունները ուժի մեջ են մտնելու 2027թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: Վաղ ընդունումը թույլատրվում է, սակայն անհրաժեշտ է բացահայտում: ՖՀՄՍ 18 ստարդարտը կիրառվելու է հետահայաց:

Ներկայումս Ընկերությունը աշխատում է բացահայտել այն բոլոր ազդեցությունները, որոնք փոփոխությունները կունենան հիմնական ֆինանսական հաշվետվությունների և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների վրա:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

3. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (շարունակություն)

ժ) Հրապարակված, սակայն դեռևս չգործող ստանդարտներ (շարունակություն)

ՖՀՄՄ 19 Դուստր կազմակերպություններ՝ առանց հրապարակային հաշվետվողականության: Բացահայտումներ

2024 թվականի մայիսին ՀՀՄՄԻ-ն հրապարակել է ՖՀՄՄ 19 ստանդարտը, որը հնարավորություն է տալիս իրավասու կազմակերպություններին ընտրություն կատարել՝ կիրառելու նվազեցված պահանջները բացահայտումների նկատմամբ՝ միաժամանակ կիրառելով հաշվապահական հաշվառման այլ ՖՀՄՄ ստանդարտների ճանաչման, չափման և ներկայացման պահանջները: Իրավասու լինելու համար, կազմակերպությունը պետք է հանդիսանա դուստր կազմակերպություն հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ, ինչպես սահմանված է ՖՀՄՄ 10 ստանդարտում, չի կարող ունենալ հրապարակային հաշվետվողականություն, և պետք է ունենա մայր կազմակերպություն (վերջնական կամ միջանկյալ), որը պատրաստում է հանրության օգտագործման համար հասանելի համախմբված ֆինանսական հաշվետվություններ, որոնք համապատասխանում են ՖՀՄՄ հաշվապահական հաշվառման ստանդարտներին: ՖՀՄՄ 19 ստանդարտը ուժի մեջ է մտնում 2027 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար, իսկ վաղաժամկետ կիրառումը թույլատրվում է:

Քանի որ Ընկերության պարտքային արժեթղթերը հրապարակայնորեն շրջանառվում են, ապա Ընկերությունը իրավասու չէ կիրառել ՖՀՄՄ 19 ստանդարտը:

Փոփոխություններ ֆինանսական գործիքների դասակարգման և չափման մեջ. Փոփոխություններ ՖՀՄՄ 9 և ՖՀՄՄ 7 ստանդարտներում

2024 թվականի մայիսին ՀՀՄՄԻ-ն հրապարակել է ՖՀՄՄ 9 և ՖՀՄՄ 7 ստանդարտների փոփոխությունները - Փոփոխություններ ֆինանսական գործիքների դասակարգման և չափման մեջ (այսուհետ՝ Փոփոխություններ): Փոփոխությունները ներառում են՝

- Պարզաբանում, որ ֆինանսական պարտավորությունն ապահանջվում է «մարման ամսաթվին» և սահմանում է հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրության հնարավորություն (եթե բավարարված են որոշակի պայմաններ) էլեկտրոնային վճարային համակարգով մարված ֆինանսական պարտավորությունները մինչև «մարման ամսաթիվը» ապահանջելու համար;
- Լրացուցիչ ուղեցույց այն մասին, թե ինչպես պետք է գնահատվեն պայմանագրային դրամական միջոցների հոսքերը բնապահպանական, սոցիալական և կորպորատիվ կառավարման և նմանատիպ հատկանիշներով ֆինանսական ակտիվների համար;
- Պարզաբանումներ այն մասին, թե որոնք են «առանց ռեզրեսի հատկանիշները» և որոնք են պայմանագրորեն կապակցված գործիքների բնութագրերը;
- Պայմանական հատկանիշներով ֆինանսական գործիքների բացահայտման և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով իրական արժեքով դասակարգված բաժնային գործիքների բացահայտման լրացուցիչ պահանջների սահմանում:

Փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2026թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Վաղ կիրառումը թույլատրվում է միայն ֆինանսական ակտիվների դասակարգման և համապատասխան բացահայտումների համար: Ընկերությունը ներկայումս գնահատում է այս փոփոխությունների հնարավոր ազդեցությունը իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

3. ՀԱՇՎԱԳՎԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԲԱԳԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (շարունակություն)

ժ) Հրապարակված, սակայն դեռևս չգործող ստանդարտներ (շարունակություն)

ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների տարեկան բարելավումներ – Բաժին 11

2024 թվականի հուլիսին ՀՀՄՍԻ-ն հրապարակել է ինը նեղ շրջանակի փոփոխություններ որպես ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների պարբերական թարմացման մաս: Փոփոխությունները ներառում են պարզաբանումներ, պարզեցումներ, ճշգրտումներ կամ փոփոխություններ ՖՀՄՍ 1 «Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների առաջին անգամ որդեգրումը», ՖՀՄՍ 7 «Ֆինանսական գործիքներ. Բացահայտումներ» և ՖՀՄՍ 7 ստանդարտի կիրառման վերաբերյալ կից ուղեցույց, ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ», ՖՀՄՍ 10 «Համախմբված ֆինանսական հաշվետվություններ», ՀՀՄՍ 7 «Դրամական հոսքերի մասին հաշվետվություն» ստանդարտների համապատասխանությունը բարելավելու համար:

Փոփոխությունները ուժի մեջ են մտնելու 2026թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: Վաղ կիրառումը թույլատրվում է, սակայն անհրաժեշտ է բացահայտում:

Ընկերությունը չի ակնկալում, որ տվյալ փոփոխությունները նշանակալի ազդեցություն կունենան ֆինանսական հաշվետվությունների վրա:

Բնական պայմաններից կախված էլեկտրաէներգիայի վերաբերյալ պայմանագրեր – Փոփոխություններ ՖՀՄՍ 9-ում և ՖՀՄՍ 7-ում

2024 թվականի դեկտեմբերին ՀՀՄՍԻ-ն հրապարակել է ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 7 ստանդարտների փոփոխությունները – Բնական պայմաններից կախված էլեկտրաէներգիայի վերաբերող պայմանագրեր: Փոփոխությունները կիրառվում են միայն այն պայմանագրերի նկատմամբ, որոնք վերաբերում են բնական պայմաններից կախված էլեկտրաէներգիային:

Փոփոխությունները՝

- Պարզաբանում են «սեփական օգտագործման» պահանջների կիրառումը բնական պայմաններից կախված էլեկտրաէներգիայի վերաբերյալ պայմանագրերի համար;
- Փոփոխում են դրամական հոսքերի հեջավորման փոխհարաբերություններում հեջավորված հոդվածների նախորդման պահանջները բնությունից կախված էլեկտրաէներգիայի վերաբերյալ պայմանագրերի համար;
- Ավելացնում են բացահայտման նոր պահանջներ՝ հնարավորություն տալով ներդրողներին հասկանալ այսպիսի պայմանագրերի ազդեցությունը ընկերության ֆինանսական արդյունքների և դրամական հոսքերի վրա:

Փոփոխությունները ուժի մեջ են մտնելու 2026թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Վաղ ընդունումը թույլատրվում է, սակայն անհրաժեշտ է բացահայտում: Մեփական օգտագործման գծով բացառության վերաբերյալ փոփոխությունները կիրառվում են հետընթաց, իսկ հեջի հաշվառման վերաբերյալ փոփոխությունները պետք է կիրառվեն առաջընթաց հեջավորման նոր փոխհարաբերությունների նկատմամբ՝ նախորդված սկզբնական կիրառման ամսաթվից: Ինչպես նաև, ՖՀՄՍ 7-ի բացահայտման գծով փոփոխությունները պետք է կիրառվեն ՖՀՄՍ 9-ի գծով փոփոխությունների հետ մեկտեղ: Եթե կազմակերպությունը չի վերահաշվարկում համեմատական տեղեկատվությունը, այն չի կարող ներկայացնել համեմատական տեղեկատվության բացահայտումներ:

Ընկերությունը չի ակնկալում, որ տվյալ փոփոխությունները նշանակալի ազդեցություն կունենան ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹ-ԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

3. ՀԱՇՎԱԳՎՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԲԱԳԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (շարունակություն)

Ժ) Հրապարակված, սակայն դեռևս չգործող ստանդարտներ (շարունակություն)

Կարևոր հաշվապահական դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է որպեսզի Ընկերության ղեկավարությունը կարևոր դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են ունենում ֆինանսական հաշվետվություններում արտացոլված եկամուտների և ծախսերի գումարների վրա, ակտիվների և պարտավորությունների վրա, ինչպես նաև կից բացահայտումների և պայմանական պարտավորությունների բացահայտման վրա: Այս ենթադրությունների ու գնահատումների վերաբերյալ անորոշությունը կարող է հանգեցնել ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների հաջորդող ֆինանսական տարում էական ճշգրտումների առաջացման զգալի ռիսկ:

Դատողություններ

Ֆոնդերի նկատմամբ վերահսկողություն

Ինչպես բացահայտված է Ծան. 1(ա)-ում, Ընկերությունը կառավարում է Ֆոնդը որպես ֆոնդի կառավարիչ՝ միաժամանակ ունենալով 6.08% ուղղակի ներդրումներ Ֆոնդում, ինչպես նաև ստանում է կառավարման վճարներ և կատարողականի վրա հիմնված որոշակի վճարներ, որոնք առնչվում են Ֆոնդի գուտ ակտիվների արժեքին: Ղեկավարությունը, զգալի դատողություններ կատարելով, եզրակացրել է, որ Ընկերությունը չի վերահսկում Ֆոնդը՝ հաշվի առնելով Ընկերության ազդեցության սահմանափակ տիրույթը Ֆոնդի գործառնություններից փոփոխական եկամտաբերության նկատմամբ, Ֆոնդի ներդրողների կազմը, Ֆոնդի կանոնները Ընկերության՝ որպես ֆոնդերի կառավարիչ դերի դադարեցման գծով և այլ գործոններ:

Գնահատումներ և ենթադրություններ

Ապագային և այլ առանցքային աղբյուրների գնահատման անորոշությանն առնչվող ենթադրությունները հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ, որոնք պարունակում են ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքի ճշգրտման նշանակալի ռիսկ հաջորդ ֆինանսական տարում, ներկայացված են ստորև: Ընկերությունն իր ենթադրությունները և գնահատումները կառուցել է՝ հիմնվելով ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ժամանակ հասանելի չափանիշների վրա: Ներկա հանգամանքները և ենթադրությունները ապագա զարգացումների վերաբերյալ, այնուամենայնիվ կարող են փոխվել շուկայական փոփոխությունների հետ կապված կամ Ընկերության վերահսկողությունից դուրս գտնվող հանգամանքներից ելնելով: Այսպիսի փոփոխությունները, երբ տեղի են ունենում, արտացոլվում են ենթադրություններում:

Իրական արժեքի չափում

Դատողությունները, որոնք էական ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում և գնահատումներում ճանաչված գումարների վրա, որոնք կարող են առաջացնել ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքի էական ճշգրտում հաջորդ ֆինանսական տարվա ընթացքում, վերաբերում են ֆինանսական գործիքների հաշվառմանը, մասնավորապես՝ իրական արժեքի չափմանը: Իրական արժեքի լավագույն հիմնավորումը գների գնանշումն է ակտիվ շուկայում: Ակտիվ շուկայում գնանշված գների բացակայության դեպքում Ղեկավարությունն օգտագործում է գնահատման այլ մեթոդներ, օրինակ՝ համեմատական մոտեցումը նմանատիպ գործիքների հետ ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան շուկաներում, ինչպես նաև վաճառքի գործարքների փաստացի գները, որոնք տեղի են ունեցել հաշվետու ամսաթվին մոտ ժամանակահատվածում: Տե՛ս 5, 11 ծանոթագրությունները:

4. ԵԿԱՄՈՒՏ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԻՑ

հազար դրամ	2025թ.	2024թ.
Եկամուտ կառավարման վճարներից		
Կատարողականի վճար – Լիմիթես Փրայմ ֆոնդ	568,604	187,450
Ներդրումների կառավարման վճար – Լիմիթես Փրայմ ֆոնդ	119,151	63,462
Հաջողության հաստատուն վճար – Լիմիթես Փրայմ ֆոնդ	21,027	6,874
Ներդրումների կառավարման վճար – Լիմիթես Գրոուլթ ֆոնդ	-	9,748
ԸՆԴԱՄԵՆՆԸ	708,782	267,534

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
(շարունակություն)**

5. ՉՈՒՏ ԵԿՎՄՈՒՏ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆԵՐ

հազար դրամ	2025թ.	2024թ.
Չուտ եկամուտ Լիմիթես Փրայմ Ֆոնդում ներդրումներից	70,839	18,755
Չուտ եկամուտ Լիմիթես Գրոութ Ֆոնդում ներդրումներից	-	9,322
Չուտ եկամուտ այլ ներդրումներից	-	322
Ընդամենը	70,839	28,409

6. ՉՈՒՏ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿՎՄՈՒՏ / (ԾԱԽՍ)

հազար դրամ	2025թ.	2024թ.
Տոկոսային եկամուտ		
Տոկոսային եկամուտ արժեթղթերից	-	310
Տոկոսային եկամուտ տրված փոխառություններից	-	113
	-	423
Տոկոսային ծախս		
Տոկոսային ծախս ստացված վարկերից	(1,086)	-
	(1,086)	-
Ընդամենը	(1,086)	423

7. ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

հազար դրամ	2025թ.	2024թ.
Այլ գործառնական ծախսեր		
Անձնակազմի գծով ծախսեր	89,572	45,510
Գովազդի և ներկայացուցչական ծախսեր	26,275	12,953
Գործուղման ծախսեր	20,555	-
Խորհրդատվական և մասնագիտական վճարներ *	12,242	18,197
Շահույթահարկից բացի այլ հարկեր	3,179	2,309
Այլ	2,940	3,723
Մաշվածության ծախսեր	2,141	1,541
Հաղորդակցության գծով ծախսեր	746	906
Միջնորդավճարների գծով ծախսեր	539	284
Գրասենյակային ծախսեր	107	1,168
Ֆինանսական համակարգի հաշտարարի գծով ծախսեր	90	90
Ընդամենը	158,386	86,681

* Մասնագիտական և խորհրդատվական ծառայությունների մեջ ներառված է Ըներեության՝ 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ՖՀՄՍ ֆինանսական հաշվետվությունների ստորիտի վճարը, որը կազմում է 3,200 հազար դրամ (2024թ.՝ 3,200 հազար դրամ 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ՖՀՄՍ ֆինանսական հաշվետվությունների ստորիտի վճար): Բոլոր վճարները ներկայացված են առանց ԱԱՀ:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈՌԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

8. ԾԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԾԱԽՍ

հազար դրամ	2025թ.	2024թ.
Շահութահարկի գծով ծախս		
Ընթացիկ շահութահարկի գծով ծախս	98,941	33,915
Հետաձգված հարկի գծով ծախս	(218)	(648)
Ընդամենը	98,723	33,267

Արդյունավետ տոկոսադրույքի համադրում

	2025թ.	Արդյունավետ տոկոսադրույք %	2024թ.	Արդյունավետ տոկոսադրույք %
Շահույթը՝ մինչև շահութահարկով հարկումը	619,798		210,596	
Հարկման դրույքաչափով հաշվարկված հարկ	111,564	18.00	37,907	18.00
Չուտ չհարկվող եկամուտ	(12,841)	(2.07)	(4,640)	(2.2)
Շահութահարկի գծով ծախս	98,723	15.93	33,267	15.80

Հետաձգված հարկային ակտիվների գծով շարժը ներկայացվում է ստորև՝

հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31	Ճանաչված շահույթում կամ վնասում	2025թ. դեկտեմբերի 31
Պահուստներ	635	40	675
ԱՊԿ գծով պահուստներ (ՖՀՄՍ 9)	-	172	172
Հիմնական միջոցներ	(30)	6	(24)
Ընդամենը գուտ հետաձգված հարկային ակտիվների/պարտավորությունների շարժը	605	218	823

9. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐ

հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31	2024թ. դեկտեմբերի 31
Ընթացիկ հաշիվներ		
Միջազգային ֆինանսական հաստատություններում	1,907	1,983
ՀՀ Բանկերում	3,929	818
Պարտքային կորստի գծով պահուստ	(12)	-
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	5,824	2,801

Տվյալ հաշվետվությունում ներկայացված դրամական միջոցների և դրանց համարժեքների գծով օգտագործման սահմանափակումներ առկա չեն:

10. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ ԴԵՔԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔ

հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31	2024թ. դեկտեմբերի 31
Կառավարման վճարների գծով դեբիտորական պարտք	280,111	28,701
Պարտքային կորստի գծով պահուստ	(560)	-
Ընդամենը	279,551	28,701

Ընթացիկ և նախորդ հաշվետու ժամանակաշրջանների վերջի դրությամբ Ընկերությունը չունի ժամկետանց կամ խնդրահարույց պահանջներ:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

11. ԾԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ՄԻՋՈՑՈՎ ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔՈՎ ՉԱՓՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ

<i>հազար դրամ</i>	2025թ. դեկտեմբերի 31	2024թ. դեկտեմբերի 31
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Ներդրումներ ֆոնդի փայերում	448,886	260,812
ԸՆդամենը	448,886	260,812

12. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Սկզբնական արժեք	Համակարգիչներ և հաղորդակցու- թյան սարքավորումներ	Գրասենյակային սարքավորումներ	ԸՆդամենը
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	2,377	2,266	4,643
Ավելացումներ	921	2,928	3,849
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,298	5,194	8,492
Ավելացումներ	1,013	-	1,013
Մնացորդը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,311	5,194	9,505

Մաշվածության ծախս

2024թ. հունվարի 1-ի դրությամբ	449	155	604
Մաշվածության ծախս	1,078	463	1,541
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,527	618	2,145
Մաշվածության ծախս	1,487	654	2,141
Մնացորդը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,014	1,272	4,286

Հաշվեկշռային արժեքը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,771	4,576	6,347
Հաշվեկշռային արժեքը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,297	3,922	5,219

13. ՏՐԱՄԱԳՐՎԱԾ ՓՈՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

<i>հազար դրամ</i>	2025թ. դեկտեմբերի 31	2024թ. դեկտեմբերի 31
Բաժնետերերին տրված փոխառություններ	191,738	4,200
ԱՊԿ պահուստ	(383)	-
ԸՆդամենը	191,355	4,200

Փոխառությունները տրամադրվել են բաժնետերերին ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով, անտոկոս և ցպահանջ վճարման տարբերակով:

Տրամադրված փոխառությունների շարժը տարվա ընթացքում

<i>հազար դրամ</i>	2025թ.	2024թ.
Մնացորդը տարեսկզբի դրությամբ	4,200	-
Կանխիկով տրամադրված փոխառություններ	192,131	113,260
Կանխիկով տրամադրված փոխառությունների մարում	(4,200)	-
Փոխառությունների մարում բաժնետիրոջ կողմից ստացված շահաբաժինների հետ հաշվանցման միջոցով	15	(16,000)
Փոխառությունների մարում բաժնետիրոջ կողմից Ընկերությանը ֆոնդի փայերի փոխանցման միջոցով	-	(93,060)
Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը փոխառությունների վրա	(393)	-
ԱՊԿ պահուստ	(383)	-

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

Մնացորդը տարեվերջի դրությամբ	191,355	4,200
-------------------------------------	----------------	-------

14. ՍՏԱՑՎԱԾ ՎԱՐԿԵՐ

<i>հազար դրամ</i>	2025թ. դեկտեմբերի 31	2024թ. դեկտեմբերի 31
Վարկեր	39,661	-
Հաշվեգրված տոկոս	145	-
Ընդամենը	39,806	-

15. ԱՅԼ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

<i>հազար դրամ</i>	2025թ. դեկտեմբերի 31	2024թ. դեկտեմբերի 31
Այլ պարտավորություններ		
Զօգտագործված արձակուրդային օրերի գծով պահուստ	3,753	3,529
Մատակարարների գծով պարտավորություններ	510	499
Աշխատակիցների գծով պարտավորություններ	4,875	-
Շահութահարկից բացի այլ հարկեր	1,274	-
Ընդամենը	10,412	4,028

16. ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կանոնադրական կապիտալը 76,200 հազար ՀՀ դրամ է (2024թ. դեկտեմբերի 31՝ 72,000 հազար ՀՀ դրամ) և բաղկացած է 1,270 (մեկ հազար երկու հարյուր յոթանասուն) հատ սովորական բաժնետոմսերից, յուրաքանչյուրը 60 հազար ՀՀ դրամ անվանական արժեքով 2024. դեկտեմբերի 31՝ 60 հազար ՀՀ դրամ մեկ բաժնետոմսի համար): 2025 թվականին շահաբաժիններ չեն հայտարարվել կամ վճարվել: 2024 թվականին Ընկերությունը հայտարարել և վճարել է 84,210 հազար ՀՀ դրամ շահաբաժիններ, որոնցից 64,210 հազար ՀՀ դրամ վճարվել է կանխիկով և 16,000 հազար ՀՀ դրամ հաշվանցվել է բաժնետերերին տրված փոխառությունների մասով: Ընկերության թողարկված բաժնետոմսերը ամբողջությամբ վճարված են:

Ստորև ներկայացվում է տեղեկատվություն Ընկերության նշանակալից մասնակիցների մասին 2025 և 2024թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

<i>հազար դրամ</i>	2025թ. դեկտեմբերի 31		2024թ. դեկտեմբերի 31	
	Մասնակցության չափը	Մասնակցության %	Վճարված բաժնետիրական կապիտալ	Վճարված բաժնետիրական կապիտալի %
Արտյոմ Զաքարյան	76,200	100.00%	68,580	90.00%
Տիգրան Աստիկյան	-	-	7,620	10.00%
Ընդամենը	76,200	100.00%	76,200	100.00%

2025 թվականի ընթացքում Տիգրան Աստիկյանը փոխանցել է իր բաժնեմասերի 10% Արտյոմ Զաքարյանին:

Մասնակիցների միջև բաշխման ենթակա պահուստները հավասար են չբաշխված շահույթի կուտակային գումարին՝ համաձայն ՀՀ օրենսդրության: Չբաշխվող պահուստներն իրենցից ներկայացնում են գլխավոր պահուստ, որը ստեղծված է համաձայն կանոնակարգային պահանջների՝ ընդհանուր ռիսկերի, այդ թվում՝ ապագա կորուստների և այլ չնախատեսված ռիսկերի և այլ պայմանական դեպքերի համար: Գլխավոր պահուստը ձևավորվել է ըստ Ընկերության կանոնադրական պահանջների, որտեղ սահմանված է այս նպատակներով պահուստի ձևավորում՝ կանոնադրական կապիտալի ոչ պակաս, քան 15%-ի չափով: Եթե գլխավոր պահուստը նվազում է Կանոնադրությամբ սահմանված նվազագույն չափից, այն համարվում է ամեն տարի՝ Ընկերության շահույթի առնվազն հինգ տոկոսի չափով հատկացումների և նոր թողարկված արժեթղթերի անվանական արժեքի վրա կատարվող հավելավճարների միջոցով: Գլխավոր պահուստը կարող է օգտագործվել բացառապես Ընկերության վնասները ծածկելու, պարտատոմսերը մարելու կամ բաժնետոմսերը հետ գնելու համար, երբ շահույթը և այլ առկա միջոցները անբավարար են: Այն չի կարող օգտագործվել որևէ այլ նպատակով: 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գլխավոր պահուստը կազմել է 5,063 հազար ՀՀ դրամի:

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
(շարունակություն)**

17. ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ընկերության գործունեությանը բնորոշ են մի շարք ֆինանսական ռիսկեր, ինչպիսիք են՝ շուկայական, պարտքային, իրացվելիության ռիսկերը, ինչպես նաև՝ ոչ ֆինանսական ռիսկեր, ինչպիսիք են՝ տեխնոլոգիական, գործառնական, իրավաբանական և համբավի ռիսկերը: Այս ռիսկերի հայտնաբերումը և կառավարումը կարևորագույն դեր են խաղում Ընկերության հաջողության և ֆինանսական կայունության տեսանկյունից: Այս ծանոթագրությունը ներկայացնում է նշված ռիսկերի հավանականությունը Ընկերության համար, այդ ռիսկերի չափման և կառավարման նպատակները, քաղաքականությունը և գործընթացները:

Ռիսկերի կառավարման կամ ռիսկերի կառավարման քաղաքականության մեջ փոփոխություններ չեն եղել տարեվերջից ի վեր:

Ընկերությունը ակտիվ դեր ունի ռիսկերի կառավարման գործընթացում, ինչպես նաև ունի սահմանած քաղաքականություններ և ընթացակարգեր, համաձայն որոնց տարբեր ստորաբաժանումներ և վերահսկողություն իրականացնող միավորներ պատասխանատու են զանազան ռիսկերի հայտնաբերման, չափման և վերահսկողության իրականացման համար: Ռիսկերի կառավարման աշխատանքների վերահսկողությունն իրականացնում է Ընկերության գործադիր մարմինը, որը պատասխանատու է ռիսկի գործոնների ուսումնասիրության և վերահսկողության համար, և վարում է ռիսկերի կառավարման քաղաքականության և գործընթացների շարունակական մշակման և բարելավման աշխատանքները: Առանձնահատուկ ռիսկ պարունակող ոլորտներն են՝

- Վարկային և շուկայական ռիսկերը, որոնք առաջանում են որոշակի արժեթղթերի գծով դիրքերի ձեռքբերման հետևանքով,
- տեղեկատվական անվտանգության և տվյալների պաշտպանության ռիսկերը, որոնց գծով առանձնահատուկ ուշադրություն պահանջող ոլորտներն են տեղեկատվական անվտանգության և տվյալների պաշտպանության քաղաքականությունը, ընթացակարգերը և վերահսկողությունները,
- ներդրումների կառավարումը, որտեղ առանձնահատուկ ուշադրություն են պահանջում այն գործողությունները, որտեղ Ընկերությունը և նրա ղեկավար կազմը հանդես են գալիս որպես ներդրումային կառավարիչներ,
- գործառնական ռիսկերը, որտեղ առանձնահատուկ կարևորություն է տրվում ներքին գործընթացների, մարդկային ռեսուրսների և համակարգերի աշխատանքների ոչ պատշաճ կատարմանը կամ խափանմանը կամ արտաքին միջադեպերի կամ հարաբերությունների (մատակարարներ, բիզնես գործընկերներ) գծով առաջանալիք ռիսկերին:

Ղեկավարության կողմից սահմանված են քաղաքականություններ և ընթացակարգեր, որոնցով պետք է առաջնորդվեն աշխատակիցները՝ հաճախորդների հետ հարաբերություններում, ինչպես նաև զանազան գործընկերների հետ փոխհարաբերություններ կառուցելու պայմանները: Հաճախորդներին առնչվող քաղաքականություններում անդրադարձ է արված հաճախորդների կողմից Ընկերության ֆոնդերում մասնակցության, տվյալների և ֆիզիկական անվտանգության, որոտի կանոնակարգերի և էթիկայի կանոնների պահպանման հարցերին, ինչպես նաև կարգավորվում են աշխատակիցների և խորհրդատուների վարքագծի կանոնները:

Ընկերության գործունեությանը բնորոշ են ռիսկեր: Հետևաբար, չնայած ռիսկային ոլորտների հայտնաբերմանն ուղղված քայլերին, ինչպես նաև ռիսկերի կառավարման քաղաքականություններին և ընթացակարգերին, չի կարելի բացառել, որ Ընկերությունը կարող է անկանխատեսելի վնասներ կրել գործառնական և այլ ռիսկերի առաջացման արդյունքում:

ա) Ֆինանսական ռիսկերի կառավարում

Ֆինանսական ռիսկերն այն ռիսկերն են, որոնք առաջանում են ֆինանսական գործիքներից, որոնց հակված է Ընկերությունը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում կամ ավարտին: Ֆինանսական ռիսկն իրենից ներկայացնում է շուկայական ռիսկը (ներառյալ՝ տոկոսադրույքի ռիսկը, արտարժույթի ռիսկը և այլ գնային ռիսկերը), վարկային ռիսկը և իրացվելիության ռիսկը: Ֆինանսական ռիսկի կառավարման գործառույթի առաջնային նպատակն է՝ սահմանել ռիսկի սահմանաչափերը, այնուհետև՝ ապահովել, որ ռիսկի հակվածությունը մնա այդ սահմանաչափի շրջանակներում:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

17. ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ (շարունակություն)

ա) Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակություն)

Վարկային ռիսկ

Վարկային ռիսկը փոխառուի, թողարկողի կամ պայմանագրային կողմի՝ պայմանավորվածության համաձայն ֆինանսական պարտավորությունները կատարելու կարողության վատթարացման արդյունքում կորստի ռիսկն է: Ընկերությունը կրում է վարկային ռիսկ առաջին հերթին ներդրումային գործունեության և բանկերում մնացորդների գծով: Ընկերությունը փորձում է կառավարել իր վարկային ռիսկը՝ կիրառելով վերահսկվող ներդրումային ռազմավարություն, ինչպես նաև կիրառելով ողջամիտ դատողություն բանկային գործընկերներ ընտրելիս: Ընկերությունը կարող է կատարել ֆինանսավորման ապահով գործարքներ, մասնավորապես՝ վաճառքի և հետգնման պայմանագրեր (ռեպո պայմանագրեր), կամ գնման և վերավաճառքի պայմանագրեր (հակադարձ հետգնման պայմանագրեր): Ապահով գործարքների գծով, որոնք ներառում են հետգնման և վերավաճառքի պայմանագրեր, Ընկերությանը թույլ է տրվում վաճառել կամ վերագրավադրել որպես գրավ պահվող արժեթղթերը և օգտագործել այս արժեթղթերը դրանց փոխառության գործարքներում, կամ փոխանցել պայմանագրային կողմերին՝ կարճ դիրքերի փակման նպատակով:

Ընկերությունը պատասխանատու է վարկային ռիսկի վերահսկողության և Ընկերության վարկային ռիսկի կառավարման համար, այդ թվում՝ վարկային քաղաքականության ձևակերպման համար՝ ներառյալ գրավի պահանջները, վարկերի գնահատումը, վարկային ռիսկի ուսումնասիրությունը և գնահատումը, սահմանափակելով ազդեցության ծավալն ըստ գործընկերների, ըստ թողարկողի, վարկային ռեյտինգի միջակայքերի, շուկայի իրացվելիության և երկրի: Դեկավարությունը չունի ներքին վարկանշման համակարգ և վարկային ռիսկը կառավարելու նպատակով պարբերաբար գնահատում է ակտիվների որակը, սահմանում է իր ռիսկի «ախորժակը»՝ կիրառելով, ի թիվս այլ միջոցների, սահմանափակումների քաղաքականություն, խոշոր գործարքների գծով սահմանելով հաստատումների մեխանիզմ:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական ակտիվների պարտքային ռիսկի ենթարկվածությունը հետևյալն է՝

	2025թ. դեկտեմբերի 31	2024թ. դեկտեմբերի 31	Երկիր	Վարկանիշ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (Moody's)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	5,824	2,801	ԱՄՆ / Հայաստան	Aa2 / Ba3 չվարկանշված
Կառավարման վճարների գծով դեբիտորական պարտք	279,551	28,701	Հայաստան	չվարկանշված
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	448,886	260,812	Հայաստան	չվարկանշված
Տրված փոխառություններ	191,355	4,200	Հայաստան	չվարկանշված
Այլ ֆինանսական ակտիվներ	507	495	Հայաստան	չվարկանշված
	926,123	297,009		

2025թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ բոլոր ֆինանսական ակտիվները ՀՀ տարածքում գտնվող գործարքային կողմերի հետ են, ֆինանսական ակտիվներից որևէ մեկը ժամկետանց կամ արժեզրկված չէ:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Ընկերությունը դժվարություն կունենա իր այն ֆինանսական պարտավորությունները կատարելիս, որոնց մարումը նախատեսվում է կատարել կանխիկ դրամով կամ այլ ֆինանսական ակտիվներով: Կանխիկի դիրքի և դրամական հոսքերի վրա ազդող գործոնները ներառում են արժեթղթերով ներդրումային գործունեությունը, փայերի բաժանորդագրման և մարման տեմպերը: Այս գործոնների համակցությունը կարող է առաջացնել էական տատանումներ որոշակի ժամկետներում կանխիկի դիրքի գծով:

Ընկերության քաղաքականությունը իրացվելիության կառավարման հարցում կայանում է նրանում, որպեսզի Ընկերությունը ունենա բավարար իրացվելիություն պարտավորությունների կատարման համար, թե՛ ընթացիկ, և թե՛ սթրեսային իրավիճակներում՝ առանց Ընկերության վարկանիշին անընդունելի վնաս հասցնելու կամ կորուստներ առաջացնելու:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹ-ԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

17. ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ (շարունակություն)

ա) Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակություն)

Իրացվելիության ռիսկ (շարունակություն)

Ստորև ներկայացված աղյուսակներում 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ներկայացված են դիսկոնտավորված հիմունքով և հիմնված են դրանց պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի վրա: Ըստ դեկավարության գնահատումների, որոշակի ֆինանսական ակտիվների գծով ակնկալվող դրամական հոսքերը տարբերվելու են դրանց պայմանագրով նախատեսված պայմաններից, ելնելով նրանից, որ դեկավարությունը կարող է իր հայեցողությամբ տնօրինել դրամական հոսքերը, կամ նախորդ փորձը ցույց է տալիս, որ դրամական հոսքերը կարող են տարբերվել պայմանագրով նախատեսված պայմաններից: Ղեկավարությունը տնօրինում է շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների, որոնք իրացվելի են և կարող են օգտագործվել ֆինանսական պարտավորությունների արտահոսքերն ապահովելու համար: Ըստ դեկավարության գնահատականի, ֆինանսական պարտավորությունների չգեղջկված հոսքերն էապես չեն տարբերվում ստորև ներկայացված աղյուսակում արտացոլված տվյալներից և լրացուցիչ չեն ներկայացվում:

2025 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 50,218 հազար դրամի Ընկերության ֆինանսական պարտավորությունները ենթակա են վճարման ցպահանջ կամ մինչև մեկ ամիս ժամկետում:

Ընկերության դեկավարությունը շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվները դիտարկում է որպես իրացվելի ակտիվներ, որոնք Ընկերությունն ի վիճակի է փոխարկել դրամական միջոցների, հետևաբար Ընկերությունը ներկայացրել է այդ ակտիվները որպես “ցպահանջ կամ մինչև մեկ ամիս” հոդվածում:

Ծուկայական ռիսկ

Ծուկայական ռիսկն այն ռիսկն է, որ շուկայում գործող գների փոփոխությունները, ինչպիսիք են տոկոսադրույքի ռիսկը, արտարժույթի փոխարժեքի և վարկային սպրեդերի փոփոխությունները կազդեն Ընկերության եկամուտների կամ ֆինանսական գործիքների իրական արժեքի վրա: Ծուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա պահպանել ռիսկին ենթարկվածության աստիճանն ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով եկամտաբերության օպտիմալացումը: Ընկերությունն իրականացնում է իր ներդրումային պորտֆելի կառավարումն ըստ արտադրանքի տեսակի և օրական կտրվածքով:

Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկն առաջանում է այն ճանաչված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով, որոնք Ընկերության գործառնական արժույթով չեն պահվում: Ստորև բերված աղյուսակում ներկայացված է արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

	2025թ. դեկտեմբերի 31		
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Ընդամենը
Ֆինանսական ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1,245	4,579	5,824
Կառավարման վճարների գծով դեբիտորական պարտք	-	279,551	279,551
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	-	448,886	448,886
Փոխառություններ տրամադրված	130,459	60,896	191,355
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	131,704	793,912	925,616
Ֆինանսական պարտավորություններ			
Վարկեր ստացված	-	39,806	39,806
Այլ պարտավորություններ	10,412	-	10,412
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	10,412	39,806	50,218
Չուտ դիրք	121,292	754,106	875,398

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

17. ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ (շարունակություն)

ա) Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակություն)

Արտարժույթի ռիսկ (շարունակություն)

	2024թ. դեկտեմբերի 31		
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Ընդամենը
Ֆինանսական ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	818	1,983	2,801
Կառավարման վճարների գծով դեբիտորական պարտք	28,701	-	28,701
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	259,932	880	260,812
Փոխառություններ տրամադրված	4,200	-	4,200
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	293,651	2,863	296,514
Ֆինանսական պարտավորություններ			
Վարկեր ստացված	-	-	-
Այլ պարտավորություններ	4,028	-	4,028
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	4,028	-	4,028
Զուտ դիրք	289,623	2,863	292,486

Գործառնական ռիսկ

Ընկերության նպատակն է կառավարել գործառնական ռիսկը, որպեսզի հավասարակշռի ֆինանսական կորուստները, ինչպես նաև իր հեղինակությանը հասցվող վնասը: Գործառնական ռիսկի շուրջ զարգացման և վերահսկողության ձևավորման և իրականացման հիմնական պատասխանատվությունը կրում է Ընկերության գործադիր մարմինը:

բ) Կապիտալ ռիսկի կառավարում

Ընկերությունը կառավարում է իր կապիտալը՝ ապահովելու համար գործունեության շարունակականությունը՝ առավելագույնի հասցնելով բաժնետերերի շահութաբերությունը՝ պարտքի և սեփական կապիտալի հավասարակշռությունն օպտիմալացնելու միջոցով: Ընկերության համար արտաքին կապիտալի պահանջներ չկան:

գ) Ոչ ֆինանսական ռիսկերի կառավարում

Կարգավորման ռիսկեր

Որպես արժեթղթերի, ակտիվների կառավարման շուկայի մասնակից, Ընկերությունը հնարավոր է ենթակա լինի պետական գործակալությունների և վերահսկող մարմինների կողմից կանոնակարգման: Այս կանոնակարգող մարմինները սովորաբար ըստ իրենց հայեցողության իրավասու են ավելի մեծ սահմանափակումներ սահմանել կանոնակարգվող միավորի գործունեության համար՝ նպատակ ունենալով պաշտպանել ներդրողների կամ հանրության շահերը: Կառավարիչը նաև ենթակա է կարգավորիչ կամ կարգավորման պահանջների, որոնք մասնավորապես առնչվում են հաճախորդների հանդեպ տարաբնույթ ֆիդուցիար պարտավորություններին, կառավարման վճարներին, համապատասխանության գործողությունների իրականացմանը, միջնորդային պայմանագրերին, շահերի բախմանը, գովազդման, կառավարչի և հաճախորդների միջև գործակալության խաչաձև և հիմնական գործարքների սահմանափակումներին, գրանցումների վարման և հաշվետվությունների ներկայացման, բացահայտման, ինչպես նաև կեղծիքից պաշտպանվածության ընդհանուր դրույթներին:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

18. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՐԸ

Ընկերությունը տրամադրում է իր ակտիվների և պարտավորությունների վերլուծություն, որոնք սկզբնական ճանաչումից հետո չափվում են իրական արժեքով, խմբավորվում են մակարդակներ 1-ից 3-ում, հիմք ընդունելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանը: Մակարդակները ներկայացվում են ստորև`

- Մակարդակ 1 – նույն ակտիվների և պարտավորությունների գծով ակտիվ շուկայում գնանշվող գները (չճշգրտված);
- Մակարդակ 2 – մակարդակ 1-ում նշված գներից տարբերվող ելակետային տվյալները, որոնք ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող) և
- Մակարդակ 3 – ակտիվի կամ պարտավորության գծով եկալետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

ա) Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները, կառավարման վճարների գծով դեբիտորական պարտքը, տրամադրված վարկերը և այլ պարտավորությունները իրացվելի են կամ ունեն կարճ մարման ժամկետ (մինչև երեք ամիս), հետևաբար, ենթադրվում է, որ հաշվեկշռային արժեքները մոտ են դրանց իրական արժեքներին:

բ) Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

<i>հազար դրամ</i>	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	-	448,886	-	448,886

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

<i>հազար դրամ</i>	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	-	260,812	-	260,812

ՀՀ պետական արժեթղթերը դասակարգվել են մակարդակ 2-ում, քանի որ դրանք գնահատվել են օգտագործելով գեղջված դրամական միջոցների հոսքերի մեթոդներ, այն դրույքաչափով, որը արտացոլում է շուկայի եկամտաբերությունը որոշակի ժամականահատվածում մինչև մարման ժամկետը:

Ֆոնդի պահվող փայերը դասակարգվում են որպես իրական արժեքի հիերարխիայի մակարդակ 2-ում, քանի որ դրանք չափվում են ոչ ակտիվ շուկայում գնանշված գնով: Ֆոնդերը, որոնցում Ընկերությունը ներդրում է կատարել, բաց են, ինչը տեղական օրենսդրության և ֆոնդի կանոնների համաձայն նշանակում է, որ ֆոնդից պահանջվում է որոշակի ֆոնդերի սեփականատիրոջը պատկանող ներդրումները մարել հրապարակված օրական իրական արժեքներով, ըստ պահանջի: Ղեկավարությունը հիմնվում է սեփական դատողությունների վրա ֆինանսական գործիքները դասակարգելիս՝ օգտագործելով իրական արժեքի հիերարխիան: Գնահատման ելակետային տվյալների նշանակությունը գնահատվում է իրական արժեքի ամբողջական չափման համեմատությամբ:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

19. ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԿԵՏԱՅՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ստորև աղյուսակը ներկայացնում է ակտիվների և պարտավորությունների վերլուծությունը՝ ըստ այն դեպքերի, երբ ակնկալվում է, որ դրանք կվերականգնվեն կամ կմարվեն: Տե՛ս *ծան. 12* Ռիսկերի կառավարում Ընկերության պայմանագրային չգեղջիված մարման պարտավորությունների մասով:

	2025թ.			2024թ.		
	Մեկ տարվա ընթացքում	Ավելի քան 1 տարի	Ընդամենը	Մեկ տարվա ընթացքում	Ավելի քան 1 տարի	Ընդամենը
<i>հազար դրամ</i>						
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	5,824	-	5,824	2,801	-	2,801
Կառավարման վճարների գծով դեբիտորական պարտքեր	279,551	-	279,551	28,701	-	28,701
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	448,886	-	448,886	260,812	-	260,812
Հիմնական միջոցներ	-	5,219	5,219	-	6,347	6,347
Փոխառություններ տրամադրված Յետաձգված հարկային ակտիվներ	191,355	-	191,355	4,200	-	4,200
Այլ ակտիվներ	507	823	823	495	605	605
	926,123	6,042	932,165	297,009	6,952	303,961
Վարկեր ստացված Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություններ	39,806	-	39,806	-	-	-
Այլ պարտավորություններ	10,412	-	10,412	4,028	-	4,028
	140,514	-	140,514	33,385	-	33,385
	785,609	6,042	791,651	263,624	6,952	270,576

Ընկերության ղեկավարությունը դիտարկում է շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվները որպես իրացվելի, ինչը Ընկերությունը կարող է փոխարկել դրամական միջոցների, հետևաբար Ընկերությունը այս ակտիվները ներակայացրել է «մեկ տարվա ընթացքում մարվող» հոդվածում:

20. ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ա) Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրության ոլորտը գտնվում է զարգացման փուլում, և այլ երկրներին հատուկ բազմաթիվ ապահովագրության ձևաչափերը հիմնականում դեռևս հասանելի չեն: Ընկերությունը չունի իր գործունեության դադարեցման, ինչպես նաև իր գույքի կամ գործունեության հետ կապված ապահովագրական դեպքերի ժամանակ առաջացող գույքի և շրջակա միջավայրի վնասի՝ երրորդ կողմի նկատմամբ պարտավորության ամբողջական ապահովագրություն: Թանի դեռ Ընկերությունը չի նախատեսել ամբողջական ապահովագրություն, առկա է ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է ունենալ նշանակալի բացասական ազդեցություն Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

բ) Դատական վարույթներ

Ընկերությունը ներգրավված չէ դատական վարույթներում, որոնք կարող են նշանակալի ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

գ) Հարկում

Հայաստանի հարկային համակարգը, լինելով համեմատաբար նոր, բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատական որոշումների հաճախակի փոփոխություններով, որոնք երբեմն հստակ չեն, հակասական են, ինչը ենթադրում է տարբեր մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են սահմանել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն առաջադրել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

20. ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

գ) Հարկում (շարունակություն)

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել այլ երկրների ռիսկերի համեմատ շատ ավելի մեծ ռիսկեր: Դեկավարությունը գտնում է, որ համապատասխանաբար է ճանաչել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի կիրառելի հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատական որոշումների իր մեկնաբանությունների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել այս ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

21. ԳՈՐԾԱՐՔՆԵՐ ԿԱՊԿՑՎԱԾ ԿՈՂՄԵՐԻ ՀԵՏ

Սույն հաշվետվությունների նպատակով Ընկերության կապակցված կողմերը ներառում են գործադիր տնօրենը, բաժնետերերը և նրանց հետ կապակցված կողմերը: Ընկերության կապակցված կողմերի հետ գործարքները հաշվառվում են շուկայում գերակշռող պայմանների և տոկոսադրույքների համաձայն: Հաշվետու և համադրելի եռամսյակների ընթացքում Ընկերության՝ կապակցված կողմերի հետ գործառնությունները հետևյալն են՝

	2025թ. դեկտեմբերի 31		2024թ. դեկտեմբերի 31	
	Բաժնետերեր և բաժնետերերի ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող ընկերություններ	Առանցքային ղեկավար անձնակազմ	Բաժնետերեր և բաժնետերերի ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող ընկերություններ	Առանցքային ղեկավար անձնակազմ
<i>հազար դրամ</i>				
Անձնակազմի գծով ծախսեր	1,251	47,232	1,394	17,371
Տրամադրված փոխառություններ 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	192,131	-	3,360	840
Փոխառությունների զուտ շարժը տարվա ընթացքում	188,771	(840)	96,420	16,840

Փոխառությունները տրամադրվել են կապակցված կողմերին ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով, անտոկոս և ցպահանջ վճարման տարբերակով: